

➤ **Հարկային եկամուտների հավաքագրման վրա ճգնաժամի բացասական ազդեցության նվազեցում**

2010 թվականին՝ հետճգնաժամային տարում, որպես գլխավոր խնդիր ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը պարբերական և ռիթմիկ ձևով ապահովել է բյուջետային եկամուտների անհրաժեշտ մակարդակը և գերակատարել է ծրագրային ցուցանիշները: 2010թ. ընթացքում ընդհանուր առմամբ ապահովվել են 591.1 մլրդ. դրամի չափով եկամուտներ, այդ թվում՝ հարկային մարմինների կողմից 321.1 մլրդ. դրամ, մաքսային մարմինների կողմից՝ 270,0 մլրդ. դրամ: 2010թ. ընթացքում պարտադիր սոցիալական վճարների մասով ապահովվել են 105,3 մլրդ. դրամի չափով եկամուտներ: Հարկ է նշել, որ 2010թ. ՊԵԿ կողմից ապահովված բյուջետային մուտքերի ցուցանիշը գերազանցում է 2009թ. ցուցանիշը շուրջ 70.0 մլրդ. դրամով:

Հարկային գերավճարների վերադարձման գործընթացի արագացում՝ ԱԱՀ-ի գերավճարի վերադարձի ավտոմատ համակարգի ներդրմամբ՝ առանց լրացուցիչ ուսումնասիրությունների կամ ստուգումների՝ հիմնվելով ռիսկային գործոնների չափորոշիչների վրա

Իրականացվել են ԱԱՀ-ի գերավճարների վերադարձի և հարկային գերավճարների հաշվանցման ավտոմատ ծրագրի մշակման և ներդրման աշխատանքներ: Կատարված աշխատանքների ընթացքում տրվել է ԱԱՀ-ի վերադարձի ավտոմատացված համակարգի նկարագիրը, սահմանվել են ռիսկային չափորոշիչներ, կազմվել դրանց ռիսկայնության բանաձևերը: ԱԱՀ-ի վերադարձի ավտոմատացված համակարգի վերաբերյալ ուղենիշերում սահմանվել են ընթացակարգերի ներդրման, վերադարձման և ԱԱՀ-ի ավտոմատացված համակարգի մոնիթորինգի ենթահամակարգերը:

Խոշոր հարկ վճարողների մոտ ոլորտային հսկողության ուժեղացում՝ ապահովելով հարկերի համարժեք հավաքագրելիությունը

2010թ. ընթացքում բյուջետային մուտքերը հիմնականում ապահովվել են խոշոր հարկ վճարողների հաշվին: Հարկ է նշել, որ 2010թ. առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից ապահովվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հաշվեգրված բյուջետային եկամուտների շուրջ 70 տոկոսը: Ինչ վերաբերվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունում 2010թ. հաշվառված հարկ վճարողներին, նրանց կողմից հարկերի և սոցիալական ապահովության վճարների մասով ապահովվել են 186,9 մլրդ. դրամի եկամուտներ՝ նույն հարկ վճարողների կողմից 2009թ. 174.6 մլրդ. դրամի դիմաց: Շարունակվում է ՀՀ տնտեսության ոլորտային կառուցվածքում առաջնային նշանակություն ունեցող ճյուղերի և ռիսկային համարվող (ըստ խոշորության աստիճանի) հարկ վճարողներ նկատմամբ թիրախային հսկողության իրականացումը:

ՓՄՁ-ների համար «փափուկ» հարկային վարչարարության կիրառում, որի արդյունքում կբարձրանա հարկերի կամավոր վճարման մակարդակը

ՓՄՁ-ների հարկերի կամավոր վճարման մակարդակի աճի, արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակների ցանկի ընդլայնման, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի համար արտոնագրային վճարի դաշտում գործունեության հնարավորության ընձեռնման նպատակով մշակված «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը ընդունվել է ՀՀ ԱԺ կողմից և 2011թ. հունվարի 1-ից ուժի մեջ է:

Չկատարված հարկային պարտավորությունների աճի սահմանափակում՝ կանխարգելելով նոր ապառքների կուտակման ռիսկերը

Աշխատանքներ են տարվել հարկային ապառքների կրճատման ուղղությամբ, որոնց արդյունքում նվազեցվել են ընթացիկ ապառքների կուտակումը, ինչպես նաև միջոցներ են ձեռնարկվել կուտակված ապառքների կրճատման ուղղությամբ:

➤ **Ռիսկերի կառավարման համակարգի ներդրման (առաջին փուլ), այդ թվում՝ ստվերային շրջանառությունների նվազեցման նպատակով**

Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի (ՌՉԱՀ) գործարկում՝ նախատեսելով հսկողական աշխատանքներ իրականացնող հարկային ծառայողների վերապարաստում

Մշակվել են «Ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության ավտոմատացման համակարգի» նկարագիրը, համակարգի կիրառման ալգորիթմները և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման շրջանակներում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.05.2010թ. թիվ 1238-Ա հրամանով հաստատվել է «Ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության համակարգի» տեխնիկական առաջադրանքը: Ներկայումս աշխատանքներ են տարվում համակարգչային ծրագրի մշակման ուղղությամբ:

Ստուգումների իրականացման ուղեցույցերի մշակում և ներդրում՝ ոլորտային առանձնահատկություններից ելնելով

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 03.03.2010թ. №415-Ա հրամանով հաստատվել է 2010թ. ընթացքում մշակման ենթակա հարկային ստուգումների ուղեցույցների ցանկը: Ծրագրին համապատասխան, մշակվել են հարկային ծառայողների համար ստուգումների ուղեցույցներ՝ զբոսաշրջության, տրանսպորտի ոլորտներում, անշարժ գույքի

գործարքների և ՀԴՄ-երի շահագործման կանոնների ստուգումների մասով: Ուղեցույցների հիման վրա, 2010թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.11.2010թ. N2415-Ա հրամանին համապատասխան ՊԵԿ ՀՏ-ների անձնակազմի համար անց են կացվել դասընթացներ:

Հարկերից խուսափելու ռիսկերի բացահայտման նոր հսկողական գործիքների ներդրում

Հաստատվել է «Հարկերի վճարումից խուսափելու ռիսկերի բացահայտման մոտեցումների վերաբերյալ» հայեցակարգը և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.11.10թ. «Ազդեսիվ հարկային պլանավորման ռիսկեր պարունակող դեպքերի վերաբերյալ կենտրոնացված շտեմարանի ստեղծման կարգը հաստատելու մասին» թիվ 2429-Ա հրամանը, որով կանոնակարգվում է ազդեսիվ հարկային պլանավորման ռիսկեր պարունակող դեպքերի հայտնաբերման, հաշվառման և դրանց վերաբերյալ կենտրոնացված շտեմարանի ստեղծման գործընթացը:

➤ **Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում
Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում և կալարելագործում, հարկային հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ընդունման ընդլայնում**

Ընդունվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.02.2010թ. «Հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով համակարգի ներդրման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 119-Ն և «Հարկային մարմին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» թիվ 120-Ն հրամանները: 2010թ. հունվարի 1-ից հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացման ծրագրային համակարգում ներդրվել են 27 հաշվետվություններ: Ներդրված է հարկային մարմիններ էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման համակարգը և առ 30.12.2010թ. էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների քանակը կազմում է 70 հազար հատ: Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացողների թիվը առ 30.12.2010թ. կազմում է 4085 հարկ վճարող: ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 22.09.2010թ. «Էլեկտրոնային հարկային հաշվետվությունների ներկայացման համակարգում հաշվետվությունների ձևաչափերը հաստատելու մասին» թիվ 2204-Ա հրամանով հաստատվել են 7 առավել ծավալուն հարկային հաշվետվությունների ձևաչափերը, որոնք տեղադրված են ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքում և որոնց միջոցով հարկ վճարողի կողմից ձևաչափին համապատասխան կազմված հաշվետվությունը կարող է ինտեգրվել էլեկտրոնային հարկային հաշվետվությունների ներկայացման համակարգ:

Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծում

Գործարկվել են հարկ վճարողների սպասարկման երկու կենտրոններ: Հաստատվել են մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտները, սպասարկման կենտրոնների հիմնական գործառույթներից բխող գործընթացների նկարագիրը:

➤ **«Կանաչ ուղու» ամբողջական կիրառման համակարգի ներդրում
Հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման և էլեկտրոնային ստորագրության համակարգի ներդրում**

Հայտարարագրի էլեկտրոնային վճարման և «կանաչ ուղու» ամբողջական կիրառման համակարգի ներդրման նպատակով հաստատվել է «ԹԻ ՎԻ ԷՄ» ավտոմատ համակարգչային ծրագրի ենթահամակարգի տեխնիկական առաջադրանքը:

Մաքսային ձևակերպումների նպատակով օգտագործվող «ԹԻ ՎԻ ԷՄ» ավտոմատ համակարգչային ծրագրի վերանայում՝ ԵՄ չափանիշներին համապատասխան

Մաքսային հայտարարագրերի լրացման ավտոմատացված «ԹԻ ՎԻ ԷՄ» համակարգչային ծրագրի վերանայման և ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով «ԹԻ ՎԻ ԷՄ» ծրագրում կատարվել են արդիականացման աշխատանքներ: Հայտարարագրի էլեկտրոնային վճարման և «Կանաչ ուղու» ամբողջական կիրառման համակարգի ներդրման նպատակով հաստատվել է «ԹԻ ՎԻ ԷՄ» ավտոմատ համակարգչային ծրագրի ենթահամակարգի տեխնիկական առաջադրանքը:

Մաքսային օրենսդրության բարեփոխում «Կանաչ ուղու» ամբողջական կիրառման համակարգի ներդրման պահանջներին համապատասխանեցնելու նպատակով

ՀՀ մաքսային օրենսդրությունը «Կանաչ ուղու» ամբողջական կիրառման համակարգի ներդրման պահանջներին համապատասխանեցնելու նպատակով մշակվել է «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որն արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը՝ 26.08.2010թ. կայացած նիստում: ՀՀ օրենքի նախագիծը 22.12.2010թ. ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: